


ՏԱՍՏ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ. Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունուած է ամէն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարուած են
խաւարանիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանանց անկախ աշխատանքը:—Ներքին Տե-
ստիքի մէջ: Նամակ Շուշու: Նամակ խմբագրին:
Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտա-
քին լուրեր:—ՀԵՌԱՊԵՐՆԵՐ:—ՊԵՏԱՍՄԱՆՆԵՐ:
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ՖԵԼԻՍՏՈՆ: Տեղե-
կութիւններ Թիֆլիսից և Թիֆլիսից Հայաստա-
նից: Կ. Պօլսի հայոց գրականութիւնը:

ԿԱՆԱՆՑ ԱՆԿԱՍ ԱՇԽԱՏԱՆԲԸ

Մշակի՝ № 32 մէջ տպւած մի յօդու-
ածից ընթերցողը կարող էր ծանօթանալ
թէ որքան բազմաթիւ են անկախ աշ-
խատանքով ապրող կանայք Անգլիայում և
որքան բազմաթիւ են այդ աշխատանքնե-
րը յիշեալ երկրում: Նոյնաման ստատիս-
տիկան կարելի էր կազմել և եւրոպական
միւս պետութիւններէ մէջ իրանց անկախ
աշխատանքով ապրող կանանց վերաբեր-
մամբ: Այդ վիճակագրութեան մէջ Ռու-
սաստանն էլ անշուշտ վերջին տեղը չէր
բռնի. ուսման մէջ վերջին ժամանակները
կանայք բաւական մեծ թիւով արդէն սկսե-
լ են ձեռք բերել հասարակական այլ և այլ
անկախ աշխատանքներ:

Բայց մեզանում, հայոց հասարակութեան
մէջ, հազիւ է նշմարուած կանանց մէջ որ
և է անկախ, ինքնուրոյն աշխատանք ձեռք
բերելու և նրանով ապրելու ձգտումը:
Մահմետական դարձող բռնութեան,
ստրկութեան և անշարժութեան տակ ապ-
րելուց յետոյ, հայուհիները հարեմա-
կան, արեւելեան ընտանեկան փակուած կան-
քը վարելուց յետոյ, նոր է զարթոնում,
նոր է արթնանում, նոր է սկսում քիչ թէ
շատ հասարակական անհատի ինքնաձանա-
րէրելուն:

ՖԵԼԻՍՏՈՆ

ՏԵԼԵԳՐԱԲԻԼԻՆԵՐ ԹԻՖԼԻՍԻՑԻՑ ԵՒ ԹԻՆԻՐՔՍԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Հայերի կրօնափոխութիւնը:—Չեմ գիտի եկեղե-
ցու կողմից:—Վարդանանց տօնը Կ. Պօլ-
սում:—Վարդանանց տօնը Իսկիւտարի մամուլի
կապան Հովհաննէս:—Գ. Տէր-Յարութիւնեանի
մահը:—Մանկունի վահանակի կողմից:—Կա-
րօնի հարցը:—Լուրերը նոր հիմնուած ընկերու-
թիւնների մասին:—Հայր Ալեքանդր մեծ Սիսուան
և փոքր Սիսուան:

Կ. Պօլսի հայ լրագրողները անգաղար նոր լու-
րեր են բերում մեզ կաթոլիկ եկեղեցականների
արած ջանքերի և ունեցած աշխուժութիւնների մա-
սին Բարբերդի և Սեբաստիայի կողմերի հայերին
կրօնափոխ անելու և դէպի կաթոլիկութիւնը
դարձնելու գործում: Չարսանակի հայերի մեծ
մասը և Սեբաստիայի 40 ընտանիք արդէն ընդու-
նել են կաթոլիկութիւնը: Կ. Պօլսի ազգային ժո-
ղովը, որ իր իրաւասութիւնից ստոր չը համա-
րելով ժամկոչների և լուսարարների կարգա-
դրելը գործերը ինքն կարգադրելու, մի քանի
շաբաթ առաջ արդէն որ փոքր ազգային տոնա-
մաներով եկեղեցու սեղանի վրա չը բարձրա-
նան, երեւի թէ իր իրաւասութիւնից ստոր է
համարում կաթոլիկական պրօպագանդայի խնդրի
վրա մտածելու և կրօնափոխութեան շարժման
առաջն առնելու:

Նորերում հարգւողները, որ Բալուի կողմերի
խօսման գիւղի եկեղեցին կողմնակի է անկախ
գործերից, այժմ կարող են եւր. Կ. Պօլսի լրագրի-
րում, թէ նոյն կողմերի Չեմ գիտի եկեղեցին էլ
կողմնակի է ամբողջապէս: Տեղական թիւրք իշ-

խութեանը հասնել: Եւ հայուհիների մեծ
մասի համար կենսական ապրուստի, նիւ-
թական ապահովութեան միակ ապաստանը
դեռ ևս ամուսնութիւնն է, ամուս-
նական կեանքը: Կինը մեզանում իր աշխա-
տանքով դեռ ևս չէ կարող ապրել. եթէ
նա այդպէս անուանված լուսաւորված դա-
սին է պատկանում—օրինակ ժամանակ նա
ապրում է իր ծնողների հաշուի կին դառ-
նալով իր մարդու աշխատանքով, իր մար-
դու հաշուով, եթէ միայն պատահմամբ չու-
նի իր ծնողներից ժառանգաբար ստացած
մի որ և է կարողութիւն, կամ պատկերա-
ւորութիւն իր բաժինը չէտ միասին ստա-
ցած չէ մի որ և է դուստր, որի տոկոսնե-
րից կարող է օգտուի:

Բայց ամուսնութիւնից, կամ իր արդէն
ունեցած կարողութիւնից ստացվող արդիւն-
քից դուրս հայուհուն մատչելի չէ ոչ մի
այլ նիւթական աղբիւր մարդկային ան-
կախ ապրուստի համար: Նրան մատչելի
չէ ոչ ուսումնական, ոչ գործնական, ոչ էլ
գեղարուեստական որ և է անկախ աշխա-
տանք:

Եթէ անկախ աշխատանք ունեցող հայ
կանայք մասին կարգիլ վիճակագրութիւն,
ինչպէս կարգիլում է այդ տեսակ վիճակա-
գրութիւն ուրիշ երկրներում անկախ աշ-
խատանքով ապրող կանանց մասին,—կը
յայտնվէին հեռեւեալ աննախնայի թիւա-
նշանները. մի քանի տասնեակ հայ կանայք
մանկավարժութեամբ են պարագլուխ
երկու, երեք հոգի մանկաբարձ են, և գու-
ցէ մի երկու հոգի, այն էլ միայն Թիֆլի-
սում, քաղաքային վարչութեան մէջ գրա-
պահութեամբ են պարագլուխ: Այս այն
բոլոր կանայք, որոնք կարողացել են հա-
նել որ և է անկախ աշխատանքի ձեռք
բերելուն:

Խանութիւնը դեռ որոնում է այս երկրորդ գործ-
ութեան հեղինակներին:

Այս տարի Կ. Պօլսի հայերը չը տօնեցին Վար-
դանանց տօնը, որ 25 տարի շարունակ սովորու-
թիւն ունէին տօնել ամէն տարի: Այս տարի այս
տօնը խոհեմութեամբ համար տօնվեցաւ հան-
դիսապէս միայն մայր-եկեղեցում, ներկայութեամբ
Յարութիւն պատրիարքի: Մեծ աղաներն ու էֆէն-
դիներն էլ խոհեմութեան համար եկեղեցի եկած
չէին այդ օրը: Բայց թիւրքաց մայրաքաղաքի ուրիշ
մի քանի եկեղեցիներում, ինչպէս Պէշիկթաշի
եկեղեցու մէջ, հանգիստաւ կերպով կատարել
են Վարդանանց հանդէսը:

Իսկ Սամաթիայի երկսեռ վարժարանների մէջ
եւր հայերը ուղեցին տօնել Վարդանանց տօնը և
այդ նպատակով հրաւեր ուղարկեցին թաղի ա-
ւագերէց հօրը նախագահել հանդիսին, տէր-հայրը
անտարբերութեամբ պատասխանել է թէ հազիւ չը
կայ իր կամ իր ստորադրեալներից որ և է մի
անձի ներկայութեան: Հետեւաբար տոնախմբու-
թիւնը կատարվեցաւ առանց եկեղեցականի ներ-
կայութեան և նախագահութեան, թէ և ամենայն
կանօնաւորութեամբ:

Բայց ինչ որ զարմանալի է, այդ այն է, որ այս
տարի Վարդանանց ազգային տօնին մասնակցե-
լ են Կ. Պօլսի և ոչ-ազգային հայաստանցիները:
Հասկանալի չէ, թէ ինչ զգացմունքներով զրգւած
խոսկումարի ա մե ըրել կ'ան Հօմ ուսումնարա-
նի աշակերտութիւնը որոշել են մի գեղեցիկ երեկոյ-
թով տօնել այս տարի Վարդանանց յիշատակը:
Այդ օտար յարկի տակ միմայր, օտար զգացում-
ներով և օտար գաղափարներով մտած աղջիկնե-
րը յանկարծ կերպարանաւորվում են, ստանում
են մի անտուր եռանդ և զարմանալի նախանձա-
խմբութիւն: Նշանակում է թէ կրակը կատարե-
լապէս մարած չէ եղել, այլ միայն պակաս էր
նրան արծարծող շունչը: Այդ օրը զարցի դահ-
լիճների տեսքը բարձրվում փոխել էր, դահլիճների
պատերը զարդարված էին հայկական նշանաւոր

Մինչև անգամ այնպիսի անկախ աշխա-
տանք, ինչպէս գեղարուեստի այլ և այլ
ձիւղերն են,—թատրօնը, երաժշտութիւնը,
երգեցողութիւնը, նկարչութիւնը, բացի մի
երեք, չորս հոգի գերասանութիւններից, մին-
չև վերջին ժամանակները ոչ մի ներկայա-
ցուցիչ չունէին մեր հայուհիների շրջա-
նում: Այն ինչ յայտնի է, որ ամէն երկրում
կինը միշտ գեղարուեստից և գրականու-
թիւնից է սկսում, երբ նրա մէջ նոր է
զարթում անկախ աշխատանքով ապրելու
զգացման ինքնաձանաւորութիւնը:

Եւ դա, մեր կարծիքով, շատ բնական է,
կինը, որ նոր է սկսում դուրս գալ իր դա-
ւաւր բարոյական ստրկութիւնից, իր ըն-
տանեկան փակուած կեանքից, աղամարդու
կամ ընտանիքի նիւթական կախումից,—նա
սկսում է նախ և առաջ օգտուի այն բնա-
ծին շնորհներից, որոնցով այդքան ձուլ կեր-
պով օժտված է բնութիւնից գրեթէ իւրա-
քանիւր կինը, քանի որ կնոջ մէջ բնածին
է ձգտումը, արամաւորութիւնը դէպի գեղե-
ցիկը, ուրեմն դէպի գեղարուեստը: Եւ
նկատված է, թէ երբ որ կնոջ մէջ նոր է
զարթում անկախ լինելու անկեղծ յան-
դութիւնը,—նրա առաջին քայլերը անկախ,
ինքնուրոյն աշխատանքի ձանապարհի վրա
լինում են, եթէ ոչ միշտ, գոնէ մեծ մա-
սամբ գեղարուեստական ասպարի-
ղում:

Այդ է պատճառը, որ մենք չենք կարող
չուրախանալ, երբ տեսնում ենք, որ վերջին
ժամանակները հայուհիներից սկսել են
դուրս գալ գեղարուեստը ուսումնասիրած,
գեղարուեստով պարագլուխ և գեղարուեստին
նուիրված անհատներ: Թող ներքի մեզ այդ
երեւոյթը, թէ հայուհիների միջից սկսել են
վերջին ժամանակները յայտնվել գերասա-
նութիւնն ու երգչուհիները,—առաջին նը-

նախնիքների պատկերներով, դալինեայ պատկե-
րով շրջանակված, գեղեցիկ վերաաւորութիւններով.
սրահի ճակատին օտմանեան և ամբիկական դրօ-
շակներ էին ծածանում: Աշակերտութիւնները եռա-
դոյն ժապաւններ էին կրում կուրծքերի վրա,—
կանաչ, դեղին և կարմիր գոյնների յերկույթը ու-
րախ անցաւ, արտասանվեցան շատ ճառեր: Հայ
աշակերտութիւն, առանց առաջնորդի, ձեռնարկել
են այդ հանդէսը և արտասանել նիւթերը խնամ-
քով իրանք են պատրաստել: Իրանց դաստիարա-
կութիւնն անգամ հիացած էին մնացել այդ ե-
ռանդից, որ բնաւ նշմարած չէին առաջ իրանց
սանիկների մէջ: Հօմ վարժարանի անօրէն օրինող
Պատրիկ, ուսուցչական խմբի կողմից հրապարա-
կապէս շնորհակալութիւն յայտնեց այդ մասին ա-
շակերտութիւնին:

Այս օրերս վախճանվեցաւ Կ. Պօլսի Բերայի
ուսանց հիւանդանոցի մէջ ուսանողների մի հայ
երիտասարդ, Գ. Տէր-Յարութիւնեան, որ Կովկասի
գաւառներից մէկի մէջ ուսանց ժողովրդական
դպրոցների տեսչի պաշտօն էր վարել մի ժամա-
նակ, և Կ. Պօլսի եկած էր արդէն հիւանդ, օգա-
փութութեան համար: Հանգուցեալը, իր հայրասու-
թիւնը, այն է 3000 ոսկի, ինչպէս պատմում են,
կտակել է Տաթևի գիւղի մէջ մի արհեստագիտա-
կան դպրոց բանալու համար: Ռուսաց հիւպատո-
սարանի հրաւերին համաձայն, հայ պատրիարքա-
րանը փոխաւորապէս կատարել է հանգուցեալի
յուրաքանչեւ ցանկերը:

Հանրածանօթ և մանաւանդ Կովկասի հայերին
լուծ ծանօթ Մանկունի վահանակի կողմից, որ
հանգուցեալ Գեղորդ կաթոլիկոսի ժամանակ այն-
քան մեծ դեր է խաղացել էջմիածնում, ինչպէս
այսինքն է լրագրողներից, այժմ Կ. Պօլսումն է
գտնվում և նորերումս Խոսկումարի Ս. Կարապետ
եկեղեցու մէջ քարոզիչ է կարգվել: Աչքները լոյս,
Խոսկումարի հայեր...

շան համարել հայուհու գովելի ձգտման և
դէպի ուրիշ անկախ, ինքնուրոյն, ազատ
հասարակական պարագլուխների ձեռք բե-
րելը: Դա թող առաջին քայլը համարվի:
Իսկ ժամանակով, յոյս ունենալով, որ հա-
յուհին կը հասկանայ, թէ ինքն էլ միւս
ազգերի կանանցից պակաս ընդունակու-
թիւն չունի, թէ ինքն էլ կարող է, օգտը-
վելով իր բնածին ընդունակութիւններից,
մշակել այդ ընդունակութիւնները տոկուն
աշխատանքի օգնութեամբ, քանի որ բնա-
կան ընդունակութեան հետ միասին նրան
պակաս չէ և աշխատասիրութիւնը,—և ժա-
մանակով ընտրել իր համար շատ ուրիշ
անկախ հասարակական կոչումներ:

Անտարակցա մեր հայուհին էլ ժամա-
նակով կը հասկանայ, որ բացի վարժութիւն
գերասանութիւն, երգչուհի, նկարչուհի լի-
նելուց, նա կարող է լինել և բժիշկ և զը-
րող և, վերջապէս, այլ և այլ գործնական,
պրակտիկային, եթէ ոչ շատ շահաւէտ, գո-
նէ նիւթական կողմից անձնապէս ապահո-
վացող և անկախ զիրք տուող պարագլ-
ուխներին նուիրված հասարակական օգ-
տաւէտ անդամ դառնալ:

Առ ժամանակ ամբողջ սրտից ողջունելով
հայ կանանց, որ նրանք վերջին տարիներ
լուծ սկսել են վճռողական քայլեր անել,
փորձ փորձելով գեղարուեստական ասպարի-
զի վրա իրանց աշխատանքով անկախ զիրք
գրաւելու, մի և նոյն ժամանակ թէ բարո-
յապէս և թէ նիւթապէս իրանց անձը ա-
պահովացնել ձգտելով, յոյս ունենալով, որ
հեռու չէ այն ապագան, երբ հայուհու
կողմից ցոյց տուած այդ գովելի ձեւերն
ու ձգտումները մեզ հետ միասին կը սկսի,
վերջապէս, քաջալերել գիտակցական կեր-
պով և ինքն հայոց հասարակութիւնը:

Գ. Ա.

Եղիպտոսի Կայիրօ քաղաքից մեզ գրում են
հետեւեալը: Կայիրեան Մատթէոս եպիսկոպոսը
Եղիպտոսի հայերի առաջնորդ է նշանակված: Մի
ամսից յետոյ նոր առաջնորդին ընդունելու բարե-
բաղդութիւնը պիտի ունենանք: Առաջնորդարանը
սկսել են նորոգել:

Կայիրօյի արաբներից հայերը կազմեցին այս
օրերս Կայիրեան ընկերութիւն արաբներից հա-
յոյց անունով մի ընկերութիւն, որ նպատակ ու-
նի օրինադական մի վարժարան հիմնել Արաբե-
րում: Այդ նորակազմ ընկերութիւնը արդէն քանի
մի աղագետ երիտասարդների աշխատութեամբ
ամեն դասակարգի հայերից մեծ ընդունակութիւն
գտաւ և շարունակում է համակրութիւն վայելել:
Կայիրօյի մէջ հիմնվել է և մի ուրիշ հա-
յոց ընկերութիւն՝ «Առաջադիմաւոր ընկերու-
թիւն»:

Հայր Ալեքանդր, որ հրատարակել է նորերումս
«Սիսուան» ընդարձակ աշխատութիւնը, այժմ
քաղաքաւոր անկելով իր այդ հիմնաւոր հեղինակու-
թիւնից, աւելի կարճ կերպով նոյն նիւթերի հետ
ծանօթացնում է ընթերցողներին, զարդարելով իր
գրութեան նոյն գեղեցիկ պատկերներով, վնե-
ցիայում հրատարակված «Բազմալէպ» ամսագրի
մէջ: Այդ գրութեանը նոյն «Սիսուան» է, միայն
աւելի փոքրիկ «Սիսուան»:

Այդ գրութեանը շնորհակալութեամբ ստացանք
և կաշխատենք նրա մասին մի այլ անգամ խօսե-
լու:

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կ. Պօլսի հայ գրականութիւնը իր բազմաթիւ ներ-
կայացուցիչներով, բազմաթիւ լրագրողներով, ամ-
սագրիչներով, շաբաթաթիւթներով, գիտական և ի-
մաստասիրական շարժումներով, հին և նոր մա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԾՈՒՇՈՒՑ

Մարտի 18-ին

Հաս ժամանակ սրանից առաջ մի քանի շուշկերի մէջ ծնունդ առաւ մի միտը հաստատել գաղթականութիւն թարթառ գետի անիւրի վրա: Որոշված էր կազմել 100 անձնակազմից բաղկացած մի ընկերութիւն, որ իր սեփական միջոցներով պիտի հոգար ամեն տեսակ ծախսեր մի կանոնաւոր գիւղաբնակչութիւն համար: Անհետաքրքիր է ընկերութեան պատմութիւնը, բաւական է միայն մտաբերել թէ ինչ կերպով են հասնում ընկերութիւնները կազմում: Բայց նպատակը նոր էր և արժանի ամենայն ուշադրութեան: 100 ընտանիքներ հաստատ վճռել էին դուրս գալ քաղաքի ներք շրջանից և Ջիւրաշիւրի լայնատարած հացատէտ դաշտերի վրա պարապել, գիւղատնտեսութեամբ: Նշանակած տեղը այժմեան դրութեան մէջ ստացած է մի տխուր անշուքի անապատի տեսքը, բայց և այդպէս գեղեցիկ համբաւ ունի Ղարաբաղում աշխարհագրական բազմաոտեսակ տնտեսութիւնների և գլխաւորապէս, հարուստ բնութեան պատճառով:

Ընկերութեան հիմնադիրները խելոյն նախագիծ էին մի կանոնադրութեան, որը ոգևորութեան մէջ ներքին անհոգեմտ էին այդ անանուն երկիրը իբրեւ մի նոր աւետեաց երկիր, որ թէև խաղաղ ուղիով երկու մարդով տանելու չափ մեծ է, բայց կարելի է ամերիկական ձևով շինել մի մաքուր կոյտի կանոնաւոր լայն փողոցներով, հասարակական մեծ շինութեան, ընկերական այգիներով և արտերի անհոգեմտ տարածութեան մէջ: Եւ այդ տեսակ սրելով անկեղծում, նոյն հիմնադիրների ասելով, պիտի ընտելանայ հայրեր ընտանիքներ հարկեր հատ մի չափով, ու ձեռով շինած տների մէջ: Հիմնադրան ասած, իրաբանները մէկը նախանշում էր, որ չէ կարող վայելել այդ տեսակ մի ընկերութեան անդամ լինելու պատիւը:

Իրօք հետ քան չէ նշանակուած տեղը մի բարեկարգ գաղթականութիւն հիմնել: Նախ և առաջ պէտք էր թարթառ ջուրը արհեստական ջրանցքի միջոցով տանել բաւական երկար տարածութեան վրայով, ապա միայն մտածել շինութիւնների, դաշտային աշխատութիւնների և հասարակական ներքին կեցութեան համար կանոններ մշակելու համար: Այդ ամենի համար պիտի

տեսնադրութեանց ճաշակներով, տանեակ տարիներ թուղթ մրտնդով չը կարողացաւ, նոյն իսկ մինչև այժմ, որոշել այն միջոցները և սրբամանները, որոնցով կարելի է օգտակար լինել այն տանկանայի կենսաբան բարեբաններ, որի անունով ինքն ամենայն օր երկրում է և անմահութեան դալիներն ստանալ է երազում: Թիւրքաց Հայաստանի ներկայացուցիչ իրան համարող Կ. Պօլսի հայ ինտելիգենցիան իր գրականութեամբ, իր ազգային ժողովով, իր ընկերութիւններով քաղաքաշար անցկացնելուց յետոյ, ոչ թէ դարձ չը տեսնէ թիւրքահայի կենսաբան, այլ մինչև իսկ մի կապ չը հաստատել իր և նրա մէջ: Կ. Պօլսի գործիչները ամենաէական խնդիրների կողմից, ինչպէս, ժողովրդեան կենսաբան ուսումնասիրութիւնը, ժողովրդի անտեսական դարգացումը, ժողովրդական ուսումնասիրաների ուղղութիւնը, ժողովրդեան կենդանի լեզուի մշակութիւնը, ազգայնութեան և կրօնական հարցերի ազդեցութեան չափը և այլն և այլն, չը կարողացան մի որոշ ուղղութիւն բռնել և մի որոշ հայեցակէտ ունենալ: Կ. Պօլսի գործիչները թիւրքաց Հայաստանի երջանիկ ապագան այսօր տեսնում են Հիւսիսի քնարի մէջ, վաղը Պէշխիսի քնարի գրուածներում, այսօր աշխարհաբանի մէջ, վաղը գրաբանում, այսօր եկեղեցու մէջ, վաղը—կեղեցուց անկախ մի դրութեան մէջ, այսօր Կ. Պօլսում կամ Կիւրիում, վաղը Վանում կամ Մուշի մէջ, և այդ ծիծաղելի ջուր ծեծելը շարունակում է մինչև այժմ, ու Կ. Պօլսի ազգաները չը գիտեն թէ ինչ ճանապարհով պիտի գնան, և թէ ինչ է իրանց պարտաւորութիւնը դեպի աղըը և վերջապէս, թէ ինչ կերպ կարող են իրանց պարտքը կատարել:—Այդ անհերքելի դառն ճշմարտութիւնները արտայայտելու առիթ տուցել Կ. Պօլսից նոր ստացված և մեր առաջը դրած փոքրիկ, մաքուր տպւած (մաքրութիւնը Եւրոպային ուսան) մի «Հանդէս ամսօր և այլ», «Ճաշակ ոսկեղէն դարձութեան» անունով:—Նայում ենք կազմի երեսին, գրած է «պատմական, գիտական, բանասիրական»

գործեր մի ամենի գրամական ոյժ, մանաւանդ որ ամենազգաւորը, ջրանցքը շինելու համար պէտք էր մի քանի վերստ ժայռաւոր գետինը փորել, խորացնել: Բայց ինչպէս որ լինի, ընկերութիւնը լիայոյս էր թէ իր սեփական միջոցներով կարող էր գլուխ բերել այդ գործը:

Թէ տեղային և թէ նահանգական իշխանութիւնները, որքան կարողացել ենք իմանալ, համարաւորում են վերաբերվել դէպի այդ ձեռնարկութիւնը, նոյն իսկ Գանձակի նահանգապետ իշխանը խորախոսել է ընկերութեան ներկայացուցիչներին, յայտնելով իր ուրախութիւնը և պատրաստակամութիւնը կարելոյն չափ ձեռնհասութեամբ հովանաւորել նոր գործիչներին: Այդ տեսակ յաջողութիւնները մեծ ոգևորութիւն էր պատճառել անհոգեմտին և միւս համակրողներին: Անդամների տաճարած թիւը կարճ միջոցով լրացած լինելով, շատերը իդուր էին աշխատում մտնել ընկերութեան մէջ, եթէ ընկերութիւնը ակցիաներ ունենար, կարող էր մեծ օգուտներ վաստակել, այնքան մեծ էր փառքը աղբի մի բարեկարգ սիրունիկ դաստակերտում, Մուշի լուսնի գեղեցիկ ստորոտներում:

Եւ երբ այդպիսի ոգևորութեամբ ժամ ժամի ետից սպասում էին թոյլտուութեան բարձրագոյն իշխանութիւնից, յանկարծ ամեն ինչ լուց, անշարժացաւ, ընկերութեան հաւատարմատարները ցրուեցան, ինքը ընկերութիւնը չը գիտէր ինչ վիճակի ենթարկվելու, որոնք մնաց, այսօր իսկ գիւղատնտեսութեան սիրահար շուշկերը կարծեք չեն էլ մտաբերում թէ եղել են այնպիսի գեղեցիկ օրեր, երբ նրանք ունեցել են ամենաներջանիկ յոյսեր ապագայի մասին:

Տխուր փաստ: Ժողովրդի միջին դասակարգից մի քանի տանեակ անդադարացած մարդիկ յանկարծ վստահանում են մի գեղեցիկ գործ հեղինակելու, բայց ինքնուրուպ և մտաւորապէս աւելի կարող դասը նրանց չէ խրախուսում, չէ աջակցում իր խորհուրդներով և ամեն տեսակ կարելի կանց տալ գործունէութեան ժամանակ վարակված էր ընտրողական տենդով, որ թմբեցրել էր ուշադրութիւն դարձնելու, խրախուսելու, մի խօսքով լրջօրէն ղեկավարելու կարողութիւնը: որքան յիշում ենք, դեռ մտքիդ էլ էին այդ գեղեցիկ ձգտումը: Մեր ուսնայ ջրած մի հատ հրահանգ, մի հատ խրատ չը տուցի, չաշխատեց բազմակողմանի ուսումնասիրութեամբ պարզել կատարելի գործի կարելիութիւնը, չափը, հնարը, ընդ-

կան այլ ու վրէն հանդէսը: Նայում ենք վերջին երկուսին,—ամսագիրը 16 էրեսից է բաղկացած, չընդ խնամով Ա. Մատթեայ Գարաբաղեան և Զ. Գուրգենի: Իսկ գիրքը:—«Կին միամեայ բաժանորդութեան հանդիսի 25 դահեկան ոսկւոյ, հասուցանելի կանխաւ»: Նայում ենք բովանդակութեանը:—«Աղբ ի խնամակարաց հանդիսի (41/2 էրես), ԶԳիտականաց (3 էրես, ներքը գրած է՝ մատուցել յառաջ, նշանակում է՝ կը շարունակվի): Թէ ինչն ընտելիչ ի լուսնի (3/4 էրես, ներքը գրած է՝ մատուցել յառաջ), Անաստիք հարկայի ժամատարտ (1 էրես, տաշտար Վաթոմեայից), Առանձին բանը հայերէն լեզուի (3 էրես, գրաբան մի քանի ոճերի բացատրութիւն), այդ է հանա պատմական—գիտական—բանասիրական,—այլուրէն հանդերձ ամսագրի բովանդակութիւնը:—Բայց այդ ինչ է, «Աղբ ի խնամակարաց, ԶԳիտականաց, Թէ ինչն ընտելիչ ի լուսնի» միթէ գրաբան է գրուած այդ ամսագիրը, մտածում է զարմացած ընթերցողը:—Այո, ընթերցող, Պօլսի հայ գրականութեան գործիչները և տաճկահայտակարների ցանկի դարձան անող-ները այժմ գրաբան են ամսագիր հրատարակում: Այդ դեռ բաւական չէ, տեսէք ինչ վերջութիւն գաշտան և ընկ, որոնք ստում են. «Ի հանել մեր ի լոյս դնողէս ի հին հայ բարբառ» դիտաւորութիւն մեր չէ արդարեւ մեղմով իմ և հնարելու անհետ առնել ի մատնադրութիւնը: Գալիս հայերէն և թուրք գրապարբէն հոյն միայն, և որոնց կարծիքով՝ «Հին հայերէնն ոչ է մեղաւոր, այլ նշնէ», և որոնք յայտնում են հայոց ազգին, որ չեն մեղմի, չորս կանոն և գործ կանոն իրանց հանգիսի մէջ հեռեկալ բառերը, չողենաւ, և բերկաւ ուղի, հեռաւոր, տալարան, լուսնաւոր, հրապան, պատուաւոր, ծաղիկ, ոստիկանութիւն և այլն և այլն:—Այդ դեռ պատկերի մի կողմն է, նայե՛ք միւսը վրա: Վերջին չափ մտքերը պարզապէս «Աղբ ի խնամակարաց հանդիսի» յոգեածից յետոյ, Պատմա-

հակառակն այնպիսիներն էլ կային, որոնք վստահեցնում էին անդամներին, առաջ բերելով դաշտան հակայական դժուարութիւններ. կարծես այդ պարոնները չէին հաւատում, որ հաստատ ձեռքով ղեկավարած հայն էլ կարող է նոյն տաժանակիւր մրցութիւնն անել բնութեան դէմ, որով այնքան մեծ հուշակ են ստացել հիւսիսային Եւրոպայի ընտելիները: Միջակ կարողութեան տէր մարդկանցից կազմված այդ ընկերութիւնը, ի հարկէ, միանգամայն չէր կարող բաւականաչափ ծախքեր անել թոյլտուութիւն ստանալու և սկզբնական պատրաստութիւններ տեսնելու համար:

Ահա գլխաւորապէս ինչ տեսակ անյարմարութիւններ ջլատեցին ընկերութեան կազմութեանը: Պակաս էր հմուտ, մասնագէտ ղեկավարող, որ իմանար դէպի լաւ և օգտուէտ ուղղել մարդկանց պատրաստակամութիւնը և հաստատ կազմը: Կատարելի գործը այնքան նոր էր մի ասիացի վաճառական ժողովրդի համար, որ կամենում էին լոյս մի տալ ոգևորութեամբ ոսկու սարեր շինել: Ոգևորութեան հետեանքն այն եղաւ, որ իդուր տեղից փող միսկուց յետոյ ապագայ գաղթականները լուցին, քուս մտան: Ինչ կատեն այս ընտելի երեւոյթի մասին մեր իշխանները, որոնք կարենաներ խորհրդից մեծապէս ֆրազաներով դանդաղելով են թէ հայը երկրագործութիւն չէ սիրում, թէ ամեն տեղ չարչի աղբուկ է նա և այլն: Այդ հասկանան արդեօք և իրանց գերը:

Եթէ շուշկի երկրագործները երազած նպատակների գէթ մի մասը իրագործելու հնար լինէր, մենք կունենայինք մի գեղեցիկ օրինակ: Եւ իրաւ, միթէ ուրախվել չէ, որ հասարակ ժողովրդի մարդիկ ինքնաբերաբար ըմբռնում են գիւղատնտեսութեան առաջին օգուտները: Սակայն ցաւակոյ տեսնում ենք, որ ինքնաճանաչութեան կազմերը մարում են կատարելաւ անօգնականութեան պատճառով: Երկրի ընտելի հարստութիւնները անձամբ են մնում մեղ և մենք անով ու վրդովմունքով տեսնում ենք, որ վաճառականութիւնը օրէցօր ընկնում է, օտար գրամատները մասնում են մեր մէջ և մեր հայը խլում:

Ի հարկէ, կարող է և այնպէս պատահել, որ Եւրոպի ընկերութիւնը կարողանայ երկրագործ դառնալ, գաղթական տնտես լինել: Բայց քանի նա ունի այժմեան կազմակերպութիւնը, մենք չենք հաւատում, որ նրա նոր ընտելութեան տեղը լինի այնպէս, ինչպէս իրանք անդամներն են ուզում:

Կան բաժանմունքի մէջ դրած է մի յօդուած ԶԳիտականաց և գիտական բաժանմունքի մէջ՝ «Թէ ինչն ընտելիչ ի լուսնի»: Վերնագիրները ցոյց են տալիս ճշգրտութեամբ գրուածքների բովանդակութիւնը և արժեքը: Միթէ յիշաւ հայոց ներկայ և նոյն իսկ անցեալ կենսաբան մէջ ոչինչ չը կայ ուշադրութեան արժանի, որ հայոց ամսագիրը իր առաջին համարում իսկ պիտի խօսէ 1540 թվին հիմնուած, սխալաբանական ուղղութեան ծնունդ մի կրօնական կարգի մասին, որպիսին էր յիշուածները, միթէ չէր կարելի գրել մինչև իսկ, ասենք նրանց լեզուով՝ «Հոգեբանականաց հայոց», «Գաղտնիութիւն հայոց» և այլն և այլն: Միթէ ճշմարիտ մեռած է հայ ժողովրդը, միթէ տաճկահայ չը կայ, և կամ միթէ Տաճկահայաստանը չունի ուսումնասիրութեան նիւթ, որ Պօլսի հայ գործիչները իրանց գրական գործունէութեան առաջին քայլերի վրա գրադրում են նրանով՝ «Թէ ինչն ընտելիչ ի լուսնի»: Թոյլ տուէ՛ք հարցնել ձեզ ձեռ լեզուով, ո՞ր դուք, Պօլսի մեծախօս ազգասէրներ «Թէ ինչն ընտելիչ ի լուսնի» և «Թէ որպիսիք են ընտելիչ Հայաստան», և «Թէ որպիսիք են ընտելիչ Հայաստան աշխարհի»: Մարդ դայացած դէն է չըզրտում այդ ամիս տետրակը, և դեռ չուրեմալով հաւատալ դէպի այդ տետրակի խնամակարը իր մէջ արթնացած արհամարհանքը, վերցնում է միւս ամիս համարը:—Բայց, աւանդ, դէպի լուսնը մի առանձին սէր արտայայտող խնամակարը նոր բան չեն գտել երկրորդ համարի համարեա. յիշած յօդուածների «մատուցել յառաջ»—շարունակութիւն է լուսնում մեծ մասը, կողքից աւելացրած Աթէնքի գովաւանքը, ուր «Անդրիք քարեղէնը անմահիցն Արամազդայ, Հերայ, Այդդոնի և այլոց դից և դիւցազանց, և Սյուրառայ և Գիտութեանց պատկերը կոփածոք, ամփոփեալք ընդ հարկան թեմայ»:... Մինչ մի կողմից Պօլսի ազգասէր-հարստատները թնայցնում են ընկերութիւնների, ուսումնասիրաների դահլիճները «Հայաստան աշխարհի անցեալ փառաց քննելի յիշատակներ ի սկիզբից, կազմութիւն, ոգևորիչ, կենդանացողիչ

Նրանց երկնոտ, անհաստատ քայլերը, նրանց աղմուկաւոր և ապարդիւն ժողովները պարզ լուսաւորում են նրանց մեծ անկարողութիւնը:

Գաւառացի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՒՆ

Թիֆլիս 20 մարտի

Թոյլ տուէ՛ք մի քանի խօսք ասել—ձեզ այսօր ուղարկած բրօշուրի առիթով, որի ուշ լոյս տեսնելու պատճառը մենք չենք: Այդ գրքուկը չէ սովորեցնում չիրամապահութեան այդ ու բէնը, այլ պարունակում է իր մէջ դանազան խրատներ և միջոցներ,—որոնց հասկանալը և գործադրելը կարող են այն անձինք, որոնք փոքր ի շատէ ծանօթ են չերամապահութեան և որոնք կը կամենան աւելի լաւ արդիւնք ստանալ չերամի սերմից բան թէ ունեցել են մինչև այժմ: Այդ գրքուկը նշանակված է գլխաւորապէս մեր այն բարեկամներին համար, որոնք ամենայն տարի Եւրոպայից բերած սերմ են առնում մեղանից: Ահա մօտ 10 տարի է որ մենք ստանում ենք վերոյիշեալ սերմը, և քանի գնում է նա աւելի և աւելի մեծ ընդունելութիւն է գտնում մեր կողմերում: Այդ սերմը նշանաւոր աշոգութիւն է ունեւում Վ. Ն. Ագուլիսով և շրջակայ գիւղերում: 1 զօլտնիկ մեր սերմից բոժոժ են ստացել՝ առնուազն 14—17 ֆ. և առաւել 20—22 ֆ: Այս գրքուկով առաջարկած միջոցները ամենն էլ էժանազին և հեշտ գործադրելի են: Մենք մեր նպատակին հասած կը լինենք, եթէ այս գրքից օգտւելով, մինչև այժմ 14—17 ֆ. ստացողները՝ 20—24 ֆ. ստանան,—իսկ 20—22 ֆ. ստացողները՝ հասնեն մինչև 30 ֆ: Թէ այս տարի, թէ այսուհետեւ մեղանից սերմ առնողները կը ստանան այս գրքուկը ձրի:

Սերմի համար պատուէրներ ընդունում ենք ամենայն տարի մինչև օգոստոսի վերջը միայն:

Ի վերջոյ, յայտնում ենք մեր չնորհակալութիւնը այն տարրերին, որը թոյլ տուաւ մեզ արտասովոր և առանձին հրատարակել իր այս, մեր կարծիքով, գեղեցիկ յօդուածը, որ դետեղված էր «Արմենիայի» 1885 թ. № 25—29 մէջ:

Հրատարակիչ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք «Ինչ միջոցներով կարելի է լաւ բերք ստանալ չերամի առողջ սերմից» բրօշուրը, որ տպված է Թիֆլիսում, ներկայ

յիշատակութեամբ, միւս կողմից Գուրգենների և Գարաբաղեանների գրաբան հոռոմաբանութիւնների համար ոչ թէ նւթ չէ կարողանում տալ այժմեան վանք, Մուշը, այլ նոյն իսկ աւերակ միջին... Ահա ձեզ գործողներ, ահա ձեզ գրականութեան աստղեր, որոնք մասին առանձինապէս վերցրած մի խօսք անգամ չարժէք տեսել, բայց որոնք լինելով մի ամբողջ սերնդի պատկեր, մի ամբողջ ժողովրդեան պատկեր հետ խաղացողներ զօրնալիք, ստիպում են մարդու հետաքրքրել իրանց անմտութիւնների անմիտ արտադրութիւններով:—Ներկայումս Պօլսի հայ գործիչները, ճաճաւոր գրաբան ոճով լուսնին են քննում ուսն:—Կրկնում է մարդ ակամայ:—Ահա ձեզ և գրական և պատմական լուսնոտութիւնը վարակում է Պօլսի գործիչներից շատերին և այժմ, երբ Պօլսի խնտելիքներին պատրաստում է տեսնելու Պօլսի Ազգային ժողովի քանահինգամակը: Եւ այդպիսիք այնքան արհամարհանքով են նայում ժողովրդեան դասատող ընդունակութեան վրա, որ ասում են իրանց գրաբան. հանդիսի մէջ: «Այն ունիմը թէ տոնայինք մեր սիրելիք ճանապարհային քաջակերի զմեզ յայս գործ»: Այն, այդ է ամենից ցաւալի կէտը, որ հայ ժողովրդեան նոյն իսկ ընթերցող, փոքր ի շատէ հակացող դասակարգը իր ներողամտութեամբ զոյլութիւն ունենալու ոյժ է տալիս գրականութեան շատ վնասակար և աննպատակ հրատարակութիւններին, դանազան տեսակ լրագիրներին և ամսագիրներին, որոնք իրանց անմտութեամբ, փոխիտամտութեամբ, անգոյն ուղղութեամբ և դատարկութեամբ ոչ միայն մի օգուտ չեն բերում, այլ բաւական էլ վայր են դրում մամուլի և գրականութեան նշանակութիւնը: Այդ երեւոյթները պատիւ չեն բերում ժողովրդեան գիտակցութեանը, ինչպէս պատիւ չեն մի աղբի գործող դասակարգի համար դանազան Գուրգենների, Գարաբաղեանների և tutti quanti:

Մ.

